

Ր ԵՎ Ռ-ՀԱՅՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Վ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հայերենի հնչյունական համակարգում **բ** և **ռ** ձայնորդների տեղի և դասակարգման հարցերը շեն լուծվել միանշանակ կերպով և հարուցել են քաղմաթիվ, հաճախ իրարամերժ տեսակետներ:

Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությունները դեռևս չեն պարզել այն ժամանակահատվածը, երբ առաջացել է թրթռոն **ռ** և **բ** բաղաձայնների հակադրությունը. մեզ ավանդված լեզվական ամենահին աղբյուրները վկայում են, որ հայերենի վաղնջական շրջանում դեռևս գործել է այգ ձայնորդների մերձավոր հակադրական զույգը: Ամենայն հավանականությամբ այս հնչույթները մինչ այդ անցել են պատմականորեն երկարատև մի ժամանակաշրջան, մինչև որ դարձել են իրարից լիովին տարբերվող և հակադրվող հնչույթներ: Գրաբարը դեռևս պահպանում է լեզվականորեն անկախուն վիճակի հետքերը: Գրավոր հուշարձանները վկայում են, որ հաճախ նույնիմաստ բառային ձևերում հանդես է գալիս մեկ **բ**, մեկ **ռ** հնչույթը:

Հայերենի հնչյունական համակարգի դասակարգման առաջին փորձերը կապվում են Դիոնիսիոս Թրակացու «Արտեառ քերականի» թարգմանության և մեկնության հետ: Որքան էլ ցանկանային մեկնիչները հարազատ մնալ հունարենի տեքստին, նրանք կամա թե ակամա պարտավոր էին անդրադառնալ հայերենի իրողություններին, որոնք տարբերվում էին հունարենից: Միաժամանակ պետք է նշել, որ Թրակացու նշված աշխատությունը դարեր շարունակ եղել է քերականության միակ դասագիրքը՝ այդ դպրոցների համար, այս իսկ առումով նրա տվյալները անընդհատ մշակվել, ճշտվել ու ճշգրտվել է հայ մեկնիչների կողմից մինչև ուշ միջնադար: Այսուհանդերձ, քերականները ձևում էին հայերենի քերականությունը՝ երբեմն հաշվի առնելով նաև հունարենի (ավելի ուշ՝ նաև լատիներենի) առանձնահատկությունները, հայերենին վերագրելով հատկանիշներ, որոնք նրա համար օտարադիր էին: Այսպես՝ սովորական էր, ասենք, հայերենի ձայնավորական համակարգում երկար և սուղ ձայնավորներ կամ վանկեր, բաղաձայնական համակարգում՝ կրկնական տարբերակելը:

Հայերենի բաղաձայնական ենթահամակարգի մեջ, այսպես կոչված, թրթռոն բաղաձայնների՝ **բ** և **ռ** հնչույթների ուսումնասիրությունը ծագումնաբանական և տիպաբանական առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Այդ հնչույթների համադրությամբ հայերենը առանձնակի տեղ է զբաղեցնում հնդեվրոպական լեզուների մեջ:

Հայ լեզվաբանության պատմության մեջ **բ** և **ռ** թրթռոն բաղաձայնների նկարագրությանը անդրադարձել են բազմաթիվ ուսումնասիրողներ՝ կապված հնչյունների ընդհանուր դասակարգման հետ: Քերականները հնչյունների տարբերակման ժամանակ ելել են երեք հիմնական սկզբունքից, դրանք դասակարգելով՝ ա) ըստ արտաբերության տեղի, բ) ըստ ձայնի որակի և գ) ըստ սաղմոսության: Ծիշտ է, նրանք ունեն տերմինաբանական տարբերություններ, սակայն դասակարգման սկզբունքները մնում են հիմնականում նույնը:

Հին քերականները, սկսած Թրակացու քերականության թարգմանությունից, ելնում էին «տառերի»՝ վանկում խաղացած դերից: Թրակացու աշխատության թարգմանության մեջ¹ **բ**-ն դրվում էր կիսաձայնների մեջ, **ռ**-ն տար-

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 7—8.

բերակվում է Բ-ից որպես կրկնակ, որ բաղկացած է «յերկուց րէից», Ավելի ուշ շրջանում ըստ ահդի Բ և Ո հնչյունները երբեմն դրվում են լեզվայինների խմբում (ըստ Շրջողների)², երբեմն կտկորդայինների մեջ (ըստ Շահան-Ջըրպեռյանի)³։

Բաղդասար Դպիրը տալիս է բաղաձայնների դասակարգման մի նոր աղբյուրնք. նա բաղաձայնները բաժանում է սրաձայնների և քթաձայնների, ընդ որում Բ և Ո ձայնորդները դնում է սրաձայնների խմբում։ Ըստ նրա՝ սրաձայնները չեն փոխում իրենց որակը, երբ հանդես են գալիս ձայնավորների հարևանությամբ։ Ըստ կազմության Բաղդասար Դպիրը Ո-ն ևս հատկացնում է կրկնակներին, իսկ Բ-ն նայերին⁴։

Թեև ևս որոշակիորեն չի կարելի խոսել սինդրաբարյան շրջանում Բ և Ո հնչյունների բաշխվածության մասին, սակայն գրաբարում արդեն շատ հաստատվորեն տառանձնացնում էին բառային զույգեր, որոնք միմյանց հակադրվում էին միայն այս հնչյունների բաշխվածությամբ։

Է. Աղայանը ևս կարծում է, որ դասական հայերենում Ո-ն և Բ-ն ինքնուրույն հնչյուններ են։ Նա գրաբարում հստակորեն սահմանադատում է յուրաքանչյուր հնչյունի գործածության ոլորտը։ Այսպես, բառակազմում հայերենի համար ընդունելի են Ո-ով կազմությունները, ինչպես բնիկ ռուկն, այնպես էլ փոխառյալ ռազմ, ռանվիրա, ռամիկ, ռոնիկ և այլն, մինչդեռ Բ-ով կա միայն բառեր, իսկ մյուս կազմությունները կամ ձեռագրային սխալագրություններ են կամ էլ օրինաչափորեն ստանում են որևէ նախահավելված՝ Բ-ազ, ա-Բազ, Բ-ազ և այլն։ Քանի որ բառակազմում միմյանց բացառող դիրք է ապա հնչյունային հակադրությունները ընդգրկում են բառամեջն ու բառավերջը՝ արի-առի, արու-առու, բար-բառ, ճար-ճառ, լուր-լուռ և այլն⁵։

Է. Թումանյանն իր «Древнеармянский язык» գրքում բերում է բառ (հիվանդություն) և բռն (միջատ) զույգը։ Պարզ է, որ Բ և Ո հնչյունները համակարգի առանձին միավորներ են, այլապես Մ. Մաշտոցը նրանց համար չէր ստեղծի առանձին տառեր, սակայն ըստ հնչման որակի և չսողակալ տպավորության այս երկու հնչյունները յուրյան այնքան նմանություններ, որ որոշ դիրքերում կարողանում էին փոխարինել միմյանց, ընդ որում արդեն գրաբարում կարելի է առանձնացնել այս հնչյունների բաշխվածության ինչ-ինչ օրինաչափություններ⁶։

Հայերենի թրթռուն ձայնորդների շփոթման, նրանց ոչ հստակ դործածության դեպքերը պահպանվել են ոչ միայն գրավոր հուշարձաններում, այլև բազմաթիվ վիճաբար արձանագրություններում։ Այսպես, X—XIV դդ. վիճաբար արձանագրություններում Բ և Ո ձայնորդների արտասանությունը նույնացել կամ մոտեցել է այն աստիճան, որ որոշ դիրքերում կիրառվում են միմյանց փոխարեն։ Այս փոփոխությունը արտահայտվում է նույն միջին հայերենի գրական երկերում և ձեռագիր հիշատակարաններում։ Հմմտ. առնենմ-առենմ, Հոփսիսմե-Հոփսիսմե, հոչակավոր-հոչակավոր, մագիստոս-մագիստոս և այլն⁷։

Գրաբարում Բ-ն հնչյունները կարող էին հերթագայվել նույն արմատից կազմած ձևերում, բառերի հոլովման և խոնարհման մեջ՝ այր>առն>յառն>նէ>արամբ, առնել>արարի>արարեալ, քոյր>քեռ>քերբ։

Պետք է կարծել, որ գրաբարում և սրանից էլ առաջ եղել են միևնույն

2 Գ. Բ. Ջահուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 181։

3 Նույն տեղում, էջ 59։

4 Նույն տեղում, էջ 267։

5 Է. Բ. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. 1, Երևան, 1964, էջ 182—185։

6 Ծ. Туманян, Древнеармянский язык. М. 1971, с. 42.

7 Մ. Ավագյան, Վիճաբար արձանագրությունների հնչյունաբանությունը, Երևան, 1973, էջ 906։

բառերի տարբերակային արտասանության բազմաթիվ ձևեր, որոնք իմաստային հակադրություններ չեն կազմել:

Բ և ռ հնչույթների հակադրությունը պայմանավորված է առաջին հերթին նրանցով կազմված ձևերի իմաստային տարբերությամբ, սակայն լսողությանը և ձայնաբանորեն խիստ մոտ հատկանիշները բավական բարդացնում են սրանց դասակարգումը: Եթե բաղաձայնների այս կամ այն խմբի համար վան տեղայնացման որոշակի շրջաններ, ապա այս բաղաձայնների համար այն ճշգրտելու անհամեմատ դժվար է:

Առանձին ուսումնասիրողներ այս հնչյունների տարբերակման ժամանակ նշում են կազմավորման տեղի տարբերություններ: Այսպես, Գ. Ղափանցյանը կարծում է, որ հայերեն Բ-ն առաջնալեզվային է, իսկ Ռ-ն միջնալեզվային⁸, ընդ որում նա նշում է, որ բոլոր դեպքերում թրթռուն կոչվող այս ձայնորդների վազմալուծման ժամանակ ծերպ չի առաջանում, որը հատուկ է շփական բաղաձայններին:

Գրեթե լիովին հակառակ տեսակետ է պաշտպանում Ա. Խաչատրյանը: Նրա վարժեցով հայերենի թե՛ Բ և թե՛ Ռ հնչյունները ըստ տեղի լնդերային են (ալվոլյարյան), տարբերությունը սրանց միջև այն է, որ Բ-ն շփական է, իսկ Ռ-ն՝ թրթռուն⁹: Մեղ համոզիչ չի թվում է. Աղայանի այն վարժիքը, լինելով ռ իմաստային հակադրությունը որոշ բառերի բառակազմում չեզոքանում է, այդ պատճառով էլ բառակազմում հնչվում է մի ինչ-որ անհասկանալի, այդ երկուսի միջինը ներկայացնող հնչյուն: Նա դրում է. «Այս կարգի բառերում հաճախ արտասանվում է Բ, ավելի ճիշտ Ռ-ի և Բ-ի միջինը ներկայացնող մի հնչյուն, որ ավելի մոտ է Բ-ին (րեկտոր, բաղիտ), սակայն դա չի ազդում իմաստի վրա»¹⁰: Եթե նույնիսկ ընդունենք, որ բառակազմում իմաստային հակադրությունը այս երկու հնչյունների միջև չեզոքանում է, այն մեզ հիմք չի տալիս կարծելու, թե խոսողները չեն գիտակցում, թե իրենք որ հնչյունները նկատի ունեն արտաբերության ժամանակ: Նման բան տեղի է ունենում հատկապես արագ տեմպով արտասանության ժամանակ, մինչդեռ ընդգծված, հստակ արտասանության ժամանակ յուրաքանչյուր անհատ գիտակցում է իր արտասանական հնարավորությունները այս կամ այն հնչյուն արտաբերելու ժամանակ և չի խառնում, քանի որ նման արտաբերությունը խորթ է գրական կանոնական մակարդակին: Կանոնից շեղվող արտասանությունները դեպքում պետք է ենթադրել որոշակի բարբառայնության կամ ակցենտի առկայություն:

Եթե է. Աղայանը ևս ըստ արտաբերման տեղի տարբերություն չի նկատում Բ և Ռ հնչյունների ձևավորման ժամանակ և հակադրությունը կազմում է ըստ միաթրթռության (Բ) և բազմաթրթռության (Ռ)¹¹, ապա Գ. Զահուկյանը կարծում է, որ Բ-ի դեպքում լեզվի ծայրը ատամների մոտ է, իսկ Ռ-ի դեպքում՝ ատամներից բարձր, ինչպես նաև տարբերություն կա սրանց արտաբերման ուժգնության աստիճանի մեջ¹²: Այս ըմբռնմանը մոտ է Ռ. Թոխմախյանի տեսակետը, որ գրում է, թե «Այս հնչյունները հակադրվում են առաջին հերթին լեզվի փոքր և մեծ հատվածների թրթռումների ամպլիտուդաներով՝ քարձր և ցածր, ընդ որում շփականությունը Բ-ի համար կարելի է

8 Գ. Ղափանցյան, Հնդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939, էջ 64:

9 Վ. Գ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979, էջ 47, Ա. Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Երևան, 1983, էջ 188—190:

10 Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 57:

11 Է. Աղայան, Գրաբարի քերականություն, Երևան, 1964, էջ 198:

12 Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսություն: Հիմունքները, Երևան, 1974, էջ 74:

դիտել որպես հավելական հատկանիշ»¹³։ Այդ տեսակետը փաստորեն նույնանում է Մ. Աբեղյանի կարծիքին, որ գտնում է, թե բաղաձայն Ե-ն նույնպիսի հնչյուն է, ինչպես Ձ-ն, մի տարբերությամբ, որ լեզվի ծայրի թրթռունները ավելի թույլ են»¹⁴։ Նման կարծիք հայտնել է նաև Վ. Ա. Առաքելյանը։ Նա այս հնչյունների տարբերությունները դիտում է ոչ թե որպես թրթռունների քանակի, այլ արտաբերության ուժի արդյունք¹⁵։

Այսպիսով, բոլոր ուսումնասիրողների մեջ փաստորեն միայն Ա. Խաչատրյանն է, որ այս հնչյունների տարբերակման հիմքում դնում է սրանց կազմավորման տարբերությունը և Ե-ն ու Վ-ն տեղադրում բաղաձայնների դասակարգման նույն վանդակում։ Մի առիթով հեղինակը նշում է, որ իր համար կարևոր նշանակություն է ունեցել Մ. Աբեղյանի այն դիտողությունը, թե հայերենի Ե հնչյունը հարկական որոշ բարբառներում աֆստիճանի է հնչյունափոխվում, որ արտաբերվում է որպես ժ կամ շ՝ ինչպես ժել՝ երեխ-ի փոխարեն, մաշտիկ՝ մաշտիկ-ի փոխարեն, մաշտա՝ մաշթա-ի փոխարեն և այլն¹⁶։ Հայտնի է, որ ինչպես բարբառներում, այնպես էլ գրական լեզվում կարող են տեղի ունենալ հնչյունափոխության դեպքեր, սակայն դա չի կարող հիմք ծառայել կարծելու, թե յուրաքանչյուր փոփոխություն պետք է դիտել որպես կազմավորման միավորների ներշարժային անցումներ։ Մի բան պարզ է, որ հնչյունափոխությունները սովորաբար ընդգրկում են տարբերակիչ հատկանիշներով առավելապես մերձակա զույգերը, ընդ որում այդ հատկանիշները կարող են լինել ինչպես ձայնաբանական, այնպես էլ ըստ կազմավորման տեղի։ Այս առումով խիստ ուշագրավ է Գ. Ջահուկյանի՝ հայերենի ձայնորդների տարբերակիչ հատկանիշների հաշվառման աղյուսակը։ Հայերենի ձայնորդների հակադրությունը կատարվում է 3 զույգ հատկանիշների հաշվառմամբ՝ վերատամնային, ռեզային, թրթռական։ Այն և ոչ հակադրությամբ պարզվում է, որ թրթռական բաղաձայնների խմբում միավորված են Ե և Վ ձայնորդները, որոնց հիմնական տարբերությունը վերատամնային և ոչ-վերատամնային հակադրության մեջ է՝ ընդ որում Վ-ն վերատամնային է, այսինքն՝ համեմատաբար ունի ավելի հստակ տեղայնացում, քան Ե-ն¹⁷։

Ինչպես հայերենի հնագույն շրջանում, այնպես էլ ժամանակակից գրական հայերենում Ե և Վ հնչյունների հաճախակի փոխանցումները հիմք են տալիս կարծելու, որ այս հնչյուններով մերձավոր հակադրական զույգեր են կազմվում։ Հայերենի բառերում կա նաև սրանց որոշակի բաշխվածություն։ Բառասկիզբը Ե-ի համար անհամեմատ թույլ դիրք է, և հակադրությունները հիմնականում ընդգրկում են բառամեջն ու բառավերջը։

Ահա թե ինչպես է ներկայացնում այս հակադրությունը Թ. Ղարազույանը. «Բառամիջում, մի շարք բառերում, թեև գրվում է Ե, բայց արտասանվում է զգալիորեն կոշտ, Վ-ին հասնող մի հնչյուն, ինչպես փարուրկ, երեսուն, բարբառ, երկբարբառ, մրմուռ, սարսուռ, մարմար, թրթուր, մարտ (ամիս), պորտ, արջ, բայց՝ վերջ, կարդալ, մարդ, փետրել, որդ, արծաթ, ամպրոպ, արծիվ, բերդ, կրծել, կարճ, կրճատել, թրջել, դարդ, երգում, քուրդ, որդի և այլն, մեծ մասամբ առաջին շարքի խուլ և շնչող խուլ հնչյունների առաջ։ Սակայն այսպիսի արտասանությունը, որը բնորոշ է խոսակցական լեզվին, պարտադիր և հաստատական բնույթ չի կրում, այդ պատճառով, ան-

¹³ Թ. Թոխմալյան, Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը, Երևան, 1983, էջ 17։

¹⁴ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 86։

¹⁵ Վ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հնչյունաբանությունը, Երևան, 1955, էջ 16։

¹⁶ А. Хачатрян, В. Н. Айрапетян, Экспериментальное исследование согласных фонем литературного армянского языка, Ереван, 1971, с. 245.

¹⁷ Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 74։

շուշու, չի կարելի (ռ)-ով հնչումը համարել վանոնական և հանձնարարելի։
 խոսակցական լեզվում երբեմն ռ-ն կարող է հնչել (ռ), օրինակ պառկել-
 պա(ր)կել և այլն¹⁸։

Խառամեջը Բ-ի համար թույլ դիրք է նաև ն և լ հնչյուններից առաջ՝
 ռուսաց և օտար լեզուներից փոխառված բառերում։ Այս առումով ֆրթոն
 բաղաձայնների բաշխվածության որոշումը գործնական մեծ նշանակություն
 ունի հայերենի ուղղախոսական և ուղղագրական հարցերի ճշգրտման հա-
 մար։ Յավոբ, ռադիոյի և հեռուստատեսության առանձին հաղորդումների
 ժամանակ բոլոր դեպքերում չէ, որ պահպանվում են ր > ռ հակադրությունն
 ունեցող բառերի կանոնական արտաբերությունները, և ներկայումս առաջ է
 եկել ինչպես արտասանության, այնպես էլ գրության մեջ որոշակի կա-
 նոնների հստակեցման անհրաժեշտություն։

Կազմավորման տեղով ու հնչմամբ ռ-ն և Բ-ն մտնում են մի մերձավոր
 հակադրական զույգի կազմում, որի ֆիզիկական արտահայտությունները բուն
 լեզվակիրների մոտ տարբերակվում են հաճախ ոչ թե լսողությամբ, այլ
 լիմատային հակադրության հիման վրա։ Եվ եթե հենց բուն լեզվակիրները
 հաճախ խառնում են այդ հնչույթների գործածությունը, ապա այն շատ դեպ-
 քերում պարզապես անհաղթահարելի է օտար ուսումնասիրողների համար։
 Հատկապես դժվար է Բ և ռ հնչույթների տարբերակումը հայերենով խոսող
 օտարների համար, քանի որ նրանց լեզվական համակարգերում չկան սրանց
 տարբերակմամբ հակադրվող ձևեր։

Այս առումով առաջնային է դառնում նշված հնչույթների տեսական և
 գործնական կիրառության խնդիրների պարզաբանումը։

ВОПРОС ФОНЕМ Բ И Բ В АРМЯНСКОМ ЯЗЫКОЗНАНИИ

А. В. МИКЕЛЯН

Р е з ю м е

О фонематичности или вариативности сонорных ր и ռ высказано
 много предположений. Акустически обе фонемы имеют много общих
 черт, и вследствие этого мена реализуется во всех периодах функ-
 ционирования армянского языка. Дистрибуция фонем такова, что они
 противопоставляются друг другу только в середине и в конце слова.
 В реальной позиции встречается исключительно сонорный ռ. Типологи-
 чески армянский отличается от других языков именно тем, что эти
 две разных фонемы противопоставляются амплитудой колебаний,
 частота же для различения не релевантна.

¹⁸ Թ. Ղաբադուլյան, Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Երևան, 1974,
 էջ 203։

Մանթ. Ավելորդ չենք համարում նշել, որ մի շարք դեպքերում հեղինակի բերած օրի-
 ճակները կասկածելի են։